

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐՄԵՆ ԴՈՒԼԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի ուսուցիչներ,

Մրտանց շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ: Հայ մարդու համար ուսուցիչ լինելը ավելին է, քան մասնագիտությունը. այն կոչում է: Ու պատահական չէ, որ մեր ժողովորդի վերաբերմունքը ուսուցչի, գրի ու դպրության հանդեպ բոլոր ժամանակներում պաշտամունքային է եղել, շնորհիվ որի էլ կարողացել ենք դիմակայել ժամանակի մարտահրավերներին ու պահպանել մեր ազգային ինքնությունը, մշակութային արժեքներն ու ավանդույթները:

Միրելի ուսուցիչներ, ձեզնից է կախված, թե ինչպիսին կլինի մեր վաղվա օրը, որովհետև ձեր ձեռքերում է մատաղ սերնդի՝ մեր երկրի վաղվա քաղաքացու կրթության ու դաստիարակության դժվարին ու պատասխանատու գործը: Այսօր սահմանամերձ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում այդ հայրենանվեր գործին են լծված շուրջ 2000 ուսուցիչներ, ովքեր մեծ նվիրումով ու պատվախնդրությամբ ծառայում են իրենց կոչմանը:

Միրելի ուսուցիչներ, մեկ անգամ ևս շնորհավորելով տոնի առթիվ՝ մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, երջանկություն, անսպառ եռանդ և նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ ուսումնական գործընթացում: